**Արձանագրություն N 4**

**Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի վերելակների հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման ԵՔ-ԲՄԾՁԲ-18/74 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի շարունակության**

ք. Երևան

13.03.2018թ.
ժամը՝ 15:20

Մասնակցում էին

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Տ. Իգիթյան/ԳԱՊ/ |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Ե. Կարապետյան /գնահատող/, Ա. Կիրակոսյան /գնահատող/, Կ. Հարությունյան /բացող/, Ա. Հարությունյան /բացող/ |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ա. Համբարձումյան |

**1. Գների նվազեցման բանակցություններին անցակացման մասին**

(Տ. Իգիթյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի՝ «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/74» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում անցկացվող գնային առաջարկների նվազեցման բանակցություններին ծանուցված մասնակիցներից ներկայացել է «ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊԸ-ի տնօրենը:

1.2 Բանակցությունների վարման համար հանձնաժողովի կողմից սահմանվել է 5 (հինգ) րոպե ժամանակահատված, որի ընթացքում մասնակցի կողմից ներկայացվել է նոր գնային առաջարկ (Հավելված 1-ը կցվում է):

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:*

**2. Ընթացակարգի շրջանակներում անցկացվող բանակցությունների արդյունքների և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի մասին**

---

(Տ. Իգիթյան)

2.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ գնային առաջարկների նվազեցման բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտի դրությամբ ընթացակարգի **3-րդ և 5-րդ չափաբաժինների,** ինչպես նաև ընթացակարգի մյուս չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվում «ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:*

**3. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու մասին**

---

(Տ. Իգիթյան)

Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ 14.03.2018թ. հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:*

**4. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

---

(Տ. Իգիթյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 3-րդ կետում նշված հարցման ստացման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 10:40-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

Հանձնաժողովի
Նախագահ՝ ------------------------------ Տ. Իգիթյան

Անդամներ՝ ------------------------------ Ա. Հարությունյան

------------------------------ Ա. Կիրակոսյան

------------------------------ Կ. Հարությունյան

------------------------------ Ե. Կարապետյան

Քարտուղար՝ ------------------------------ Ա. Համբարձումյան

### Հավելված N 1

**Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի վերելակների հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման ԵՔ-ԲՄԾՁԲ-18/74 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի շարունակության թիվ 4 արձանագրության**

ք. Երևան

13 մարտի 2018թ.
Ժամը 15:20

«Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնային առաջարկների նվազեցման նպատակով բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների հետ իրականացված բանակցությունների ընթացքում՝ «ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

| Չափ. անվանումը | ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԳԻՆ /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ | ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՆՎԱԶԵՑՎԱԾ ԳԻՆ /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ | Ստորագրություն |
|---|---|---|---|
| 3. Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Գայի 19շ. 2-րդ վերելակի հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ | 14000 | 12990 | |
| 5. Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Բ. Մուրադյան 3շ. 3-րդ մուտքի վերելակի հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ | 10000 | 3990 | |

«ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊԸ տնօրեն՝
Մասնակցի անվանումը (անունը) (պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Տիգրան Վիրաբյան